

ՇՐՋՈՒՄ ԷՐ ԷՆՏՈՒԶԻԱՍՏԸ...

Մկրտիչ Արմենի բանաստեղծութեամբ ու սրամտութեամբ լի այս փնտիկն պատկերը՝ կ'արտասպենք Նոր Ուղիէն: Մկրտիչ Արմեն սաղանդաւոր նորեկ մըն է, որմէ արդէն Նոր Ուղիէն իր 2—3 եւ 4 քիւերուն մէջ հրատարակեց *Անկերպագրած Ճանապարհ* սիսլոսով ուշագրաւ վեպ մը:

1.

Շրջում էր էնտուզիաստը (*) Երեւանի ծայրամասերով եւ մտածում էր: Նրա գլուխը լցուած էր բազմաթիւ մտքերով և աչքերը՝ նոր տալաւորութիւններով: Եւ նա չէր կարող ընդհատել իր ճանապարհը, վերադառնալ...

Նրան գիւթում էին նեղ նրբանցքները եւ հանգիստ ծառաշատ պարտէզները: Բարձր պարիսպներն իրենց ետեւում հազար ու մի հրաշքներ էին թաղցնում նրա աչքից եւ շրջում էր նա, — էնտուզիաստը...

Շրջում էր էնտուզիաստը: Շրջում էր և նրան տանում էին նեղ փողոցները, կանգնեցնում մի դրան առաջ, ապա նորից քայլել տալիս: Եւ նա գնում էր, և նա ուրախ էր, որ չգիտէր թէ ուր էր գնում: Իւրաքանչիւր անկիւնն իր ետեւում մի նոր տեսարան էր թաղցրած լինում եւ խրաքանչիւր թեքուածքը՝ նոր տալաւորութիւն:

Մի ժամ էր, ինչ նա ներս էր մտել մի նրբանցք եւ գնում էր, բայց դեռ ուրիշ փողոց չէր գուրս գալիս: Օձապտույտ նրբանցքը դեռ ձգւում էր հազար ու մի քմահաճ զիկզմալներով, եւ հիացած էնտուզիաստը գնում էր...

Ահա նա գուրս ելաւ մի լայն փողոց: Լայն եւ ամայի: Փողոցի մի ծայրը թեք-

ւում էր գէպի ինչ որ կողմ եւ կորչում, իսկ միւս ծայրը բացւում էր գէպի լայն եւ անծառ դաշտը: Թւում էր, թէ այդ փողոցով վերջանում էր նրբանցքների պանորաման: Բայց էնտուզիաստը իր վնասող հայեացքով գտաւ մի ուրիշ նրբանցքի բացուածք այդ լայն փողոցում եւ կարօտով ներս մտաւ...

Նորից շրջում էր էնտուզիաստը... Նա ոչ մի տեղ չի տեսել այս ամէնը եւ Երեւանը նրան թւում էր աշխարհի ամենահեռաքրքիր քաղաքներից մէկը:

Ոչ մի տեղ չկայ ծայրամասային այս զարմանալի անդորրը, այս ամայութիւնն ու շուրջ այս թմրեցնող յատկութիւնը: Ոչ մի տեղ չկան այս տարօրինակօրէն նեղ եւ մարդկային հեռաքրքրութիւնն այդքան գրաւող նրբանցքները...

Ոչ մի տեղ չկայ, — ստո'ւ... — ահա այս տեսարանի նման մի ուրիշը...

Էնտուզիաստը կանգ առաւ հիացմունքից քարացած: — Նրբանցքի միապագայ գորշ պատերի շարունակութիւնն ընդհատելով՝ կանգնած էր երկյարկանի տան մի պատ: Ինքնին, այդ պատը ոչնչով հեռաքրքիր չէր: Բայց ահա, երեւում է տան ճակատը, որը գտնւում է պարտէզի մէջ:

Տան ճակատը... Արեւելեան ո՞ր գեղեցկուհու ճակատն այդքան զարդարուն է եղել եւ այդքան գոյնգոյն... Եւ ո՞ր գե-

(*) Էնտուզիաստ, — ֆրանսերէն enthousiaste բառն է, խանդավառ, երազամոլ:

դեղեկուհու աչքերն են ափսոսանքով խորհմաստ և հետաքրքիր երեւացել իրենց ետեւում թաղցրած գաղտնիքներով, որքան այս լուսամուկները...

... Եւ ո՞ր աղջկայ կուրծքն է այդքան գլուխից և սքանչելի թուացել, որքան այս երկար պատշգամբը...

Շրջում էր էնտուզիաստը և կանգ առաւ: Պարտէզի ծառերն իրենց խիտ ստուերի տակ ծածկել էին այդ գեղեցիկ տունը: Եւ այդ տունն ինչի՞ էր նման. — տա՞ն էր նման, թէ պալատի, տա՞ն էր նման, թէ երազի, տա՞ն էր նման, թէ երգի...

Եւ ներսից, պարտէզի պատի ետեւից, լսում էր, թէ ինչպէս խոստովում էր ջուրը եւ գնում էր, չգիտես որ տեղից եկած և գէպի ուր շարունակուելով: Էնտուզիաստը չէր յիշում, որ իր շրջագայութեան ընթացքում նա այս մօտակայքում ջուր տեսած լինէր...

Չարմանալի էր եւ սիրելի... Իսկ շուրջը, նբանցքում, ոչինչ որոշել չէր կարելի: Երեւում էին միայն նրբանցքի երկու ծայրերը, որոնք կարծում էին իրենց թեքուածքներում: Ուրիշ ոչինչ չէր երեւում եւ էնտուզիաստը չէր կարող որոշել շրջակայքի պատերը նոյն իսկ մօտաւոր չափով: Բարձր պատերը, նեղ նրբանցքը և նրա զիգզակութիւնն իրենցով թաղցնում էին այդ տեղերի գաղտնիքը:

Բայց ահա պատշգամբը... Այնտեղից, երեւի ամէն ինչ կ'երեւայ... երեւի մի անսովոր տեսարան կ'ը բացուի գէպի նրբանցքների, պարտէզների ու անների խճճուած ցանցը...

Այսքան ժամանակ էր, որ շրջում էր էնտուզիաստը, բայց ոչինչ որոշել չէր կարող...

2.

Առաջին միաբեր, որ զբաղեցրեց էնտուզիաստին, այդ ափն էր, թէ ովքե՞ր են ապրում այդ տանը: Անհնար էր, որ նման

գեղեցկութիւնն իր մէջ թաղցրած չլինէր աւելի խորը մի գեղեցկութիւն...

Անհնար է, — մտածեց էնտուզիաստը, — որ այստեղ պառուսներ և ծերեր ապրին: Անհնար է, որ տղեղ կամ չար մարդիկ ապրին այդ տեղ: Անհնար է ենթադրել, որ այդ երգի նման տանն ապրում են չոր, գործնական մարդիկ...

Իսկ ո՞վ, ո՞վ է ապրում այդտեղ...

Էնտուզիաստը մտածում էր: Նրա միտքերը շրջում էին բոլոր ուղղութիւններով, բոլոր կողմերով եւ կանգ էին առնում միեւնոյն կէտի վրայ: — Այդ տանն ապրում է մի լա՛ւ, մի սիրելի՛ աղջիկ...

— Կարինէ, — մտածեց էնտուզիաստը:

Նա նորից նայեց պարտէզից երեւացող ծառերի գաղաթներին, պատշգամբին, լուսամուկներին, որոնք փակ էին և վարագուրուած:

— Կարինէ, — միմիայն էնտուզիաստն ինքնիրեն:

Պատշգամբին վրայ կախուած ծառի ճիւղերը խշշացին եւ հորից կանգ առան: Մի թեթեւ հով եկաւ և անցաւ: Էնտուզիաստին թուաց, թէ մէկն իրեն գուրգուրեց:

Վերեւում, տան գուռը բացուեց պատշգամբի մէջ և՛

— Կարինէ՛, — բացագանչեց էնտուզիաստը:

Աղջիկը չուեց: Նա գնաց գէպի պատշգամբի միւս ծայրը և այնտեղից վերցնելով մի կապոյտ ջրաման՝ վերադարձաւ: Նրա բարակ զգեստի տակ զգացում էր աղջկայ կազմուածքի ամբողջ գեղեցկութիւնը: Ոտները մերկ էին և երեւում էին իրենց կաթնափայլ գոյնով: Նրա մի ուսն անփութօրէն բացուել էր և նրա կրծքի սպիտակութեան վրայ ծառն իրա կանաչաւուն լոյսն էր գցել: Նա ունէր երկար մազեր որոնք շաղ էին եկել մէջքի վրայ:

Իսկ գէմբը...

Էնտուզիաստը այդպիսի գեղեցկութիւն չէր տեսել...

— Կարինէ, — մրմնջաց նա:

Մի վայրկեան տեւեց դա, թէ մի ամբողջ ժամ, — Էնտուզիաստն ասել չէր կարող: Միայն այն ժամանակ նա սթափուեց, երբ աղջիկը նորից ներս մտաւ տուն:

— Կարինէ, — մտածեց Էնտուզիաստը, կրկնելով իր տարիներով երազած, բայց անգոյ աղջկայ անունը...

... Նորից շրջում է Էնտուզիաստը, բայց նրա մտքերն անդադար զբաղուած են աղջկանով: Ահա նա մի քանի քայլ եւս գնաց, բայց շարունակել չի կարող: Նա վերադարձաւ: Նա նորից շտապում է դէպ ի — Կարինէ...

Պատահականօրէն յայտնուած

— Կարինէ...

Աքանջելի տունն ու պարտէզը

— Կարինէ...

Եւ դէպ ի անձանօթ հրաշալի աղջիկը...

Գալիս է Էնտուզիաստը: Կանգնում է իր նախկին տեղը եւ նորից նայում է: Նրա կարծքը լիքն է սիրով ու վշտով, կարօտով ու տանջանքով: Նա ուզում է ճշալ, կանչել նրան, նայիլ վերեւ, դէպ ի պատշգամբը եւ խօսել նրա հետ... խօսել...

... Ասել նրան, որ երկար տարիներ ինքը նրան է փնտռել եւ նրան է երազել: Բայց ոչ մի տեղ չի գտել և չի էլ գիտցել թէ ուր է ապրում նա, — Կարինէ...

Եւ ահա, ահա յայտնուել է նա... Այսպէս յանկարծ եւ այսքան պատահաբար... Մի՞թէ այժմ պէտք է ընդմիշտ բաժանուել, հեռանալ: Մի՞թէ Կարինէն եւս չի սիրում իրեն, մի՞թէ նա եւս իրեն չի երազել եւ այժմ մի՞թէ չի մեկնի իր սպիտակ, բարակ թեւերը եւ չի մրմնջոյ:

— Եկ վերեւ, ինձ մօտ եկ, Էնտուզիաստ...

3.

Էնտուզիաստը կը նստի պատշգամբում, կը լսի ջրի եւ ծառերի խշշոցը և իր Կարինէին մեղմ կը գրկի... իր կողքին կը

նստեցնի նրան եւ կը նայի նրա նուրբ եւ փերուշ կազմուածքին, մարմնի գունատ-կաթնաւուն երանգին, կանաչ աչքերին եւ կը շոյի նրա թոյլ երկար թեւերը...

Ո՛վ կարող էր ենթադրել, որ Էնտուզիաստն հէնց այստեղ պիտի գտնէր նրան, ում՝ այնքան փնտռել է...

Ահա իր երջանկութիւնը... Նա եկել է, մտել այս նրբանցքների լաբիրինթոսի չգիտես թէ որ անկիւնը, բնակուել է այս տանը, որպէս զի մի օր էլ, իր ետեւից, կոյր պատահականութեամբ իր մօտ բերի Էնտուզիաստին...

— Կարինէ... — մրմնջում է Էնտուզիաստը եւ չի համարձակում կանչել նրան, թէեւ վտտահ է, որ Կարինէ է նրա անունը և նա այս տանն ապրում է մենակ...

Նրան գեղեցիկ չի թւում այդ, — կանչել աղջկան: Նա նորից դուրս կուգայ պատշգամբ: Եւ երբ նորից դուրս գայ, Էնտուզիաստը կը նայի նրան իր սիրոյ աչքերով եւ աղջիկը կը զգայ այդ...

... Իսկ երբ նա նայի Էնտուզիաստին, Էնտուզիաստը կը տայ նրա անունը.

— Կարինէ...

Էնտուզիաստը, որն այդքան շրջել էր և յոգնութիւն չէր զգացել, այժմ յոգնեց այդ ներքին, հագեկան լարուածութիւնից: Նա յենուեց գիմնոսի պտտին եւ սկսեց սպասել: Նրա աչքերն անխաբիւս սեւեռուած էին դէպ ի պատշգամբ, ուր ոչ ոք չէր երեւում: Երբեմն միայն, քամին շարժում էր պատշգամբի վրայ կախուած ծառերի ճիւղերը և այդ ժամանակ Էնտուզիաստին թւում էր, թէ նորից գալիս է նա, — Կարինէ...

Եւ դո՛հ էր Էնտուզիաստը, որ ծառերի կանաչն արգէն յոգնեցնում էր իր աչքերը: Երբ որ դուրս գայ այդ սպիտակ աղջիկը, նա Էնտուզիաստի յոգնած աչքերում կանաչ լոյս հագածի պէս կ'երեւայ եւ այդ աւելի երազական կը լինի...

4.

Երկար չսպասեց էնտուզիաստը: Ահա նորից դուրս եկաւ աղջիկը եւ սկսեց սլա-տըշգամբն աւելել: Աւելելիս, կռացած գիր-քով, նա անսաւ էնտուզիաստին եւ հետա-քրքրիւր նայեց:

Հասել էր վայրկեանը էնտուզիաստի համար: Նա հիացմունքով նայեց աղջկայ աչքերին եւ շնչաց.

— Ո՞վ ես դուն...

— Ե՛ս, Ամալիա Յարութիւնեան, կամ սոմուխատի: Ի՞նչ ես ուզում, ընկեր...

էնտուզիաստի աչքերը միջնեցին: Մի վայրկեանում չքացաւ նրա երազը:

— Ես այստեղ կորցրի իմ կարիւնէին... մրմնջաց նա:

— Կարիւնէ՞, — հարցրեց աղջիկը վերե-

ւեց. — այստեղով, որքան որ գիտեմ, մարդ չի անցել: Ի՞նչ տեսակ կին էր, ուղառա՛ւ, թէ ջահիւ...

Ապա մի րոպէ մտածելուց յետոյ, բա-ցադանչեց.

— Սպասիր ամուսնուս հարցնեմ... Նա երկար ժամանակ պատշգամբում նստած էր. գուցէ տեսած լինի...

Ապա բռնեց —

— Վահան.

Ու մի քիչ սպասելուց յետոյ, տեսնե-լով, որ ամուսինը դուրս չեկաւ, նա ինքը գնաց ներս, նրան հարցնելու: Եւ երբ նո-րից դուրս եկաւ, բերելով բացասական պատասխան, ներքեւում, փողոցում, ոչ ոք չկար:

էնտուզիաստը արդէն անհետացել էր...

Երեւան

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

❖

Չեղունեն կախ՝ հին մասունի մը գեղջուկ,
Շասունց շիջած՝ սիրքս ջան մ'ե արծաթէ,
Զոր մեհամայ սարդ մ'ոսայցնով կը պատէ
Դիտելով ծուռ՝ պստին փակած Սուրբ մ'անուր:

Կրտսեր մ'արեւ ու, մերթ ընդ մերթ, շունչ մը հով
Կը փայփայեն մեհուրիւնն իր քախմաւէս,
Չեղաւ սակայն բարի ձեռք մը որ դողով
Բերեւ անոր փիչ մը կըրակ, փիչ մը ձեռք...

Դամասկոս

ԴՈՒՍԱՆ